4020

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի
նախարար
Հ. Սիմիդյան

«21» 03 2022թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**ԲՓ 0024-22**

***Ձեռնարկողը՝*** **«ԱՐԵՆԱ-3» ՍՊԸ**
*ք. Սիսիան, Հ. Արզոյան 2/2 բն. 43*

***Գործունեությունը՝*** **Շաքիի ավազների և գլաքարակոպճի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
*Սյունիքի մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝

Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**
**թիվ ԲՓ 0024-22**
**<21> 03 2022թ.**

# *Սյունիքի մարզի Շաքիի ավազների և գլաքարակոպճի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն*

Ձեռնարկող՝ «ԱՐԵՆԱ-3» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Շաքի բնակավայր

***Ներածական մաս***. «ԱՐԵՆԱ-3» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է իրականացնել Սյունիքի մարզի Շաքիի ավազների և գլաքարակոպճի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ, որի նախագիծը մշակված է Ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ Շաքիի ավազների և գլաքարակոպճի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանումը՝ որպես նախատեսվող գործունեություն դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

***Նկարագրական մաս.*** Շաքիի ավազների և գլաքարակոպճի հանքավայրը գտնվում է ՀՀ մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական տարածքում, վերջինից 1.3-2կմ արևելք: Հանքավայրը Երևան-Գորիս ավտոճանապարհից տեղադրված է 500մ հեռավորության վրա, 7 կմ ավտոճանապարհով կապված է Սիսիանի քաղաքի հետ: Շաքիի ավազների և գլաքարակոպճի հանքավայրը բնութագրվում է հետևյալ աշխարհագրական կոորդինատներով՝ 390 33′47.74″ հյուսիսային լայնության, 460 01′09.35″ արևելյան երկայնության:

Ընկերության կողմից արդյունահանման նպատակով հայցվող տարածքը զբաղեցնում է 5.085հա հա մակերես, որում ներառված է Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հողատարածքները, որոնց նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է /այլ հողատեսքեր գործառնական նշանակությամբ/ և ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության /ընդերքի օգտագործման համար տրամադրված/:

Շաքիի ավազների հանքավայրի տարածքում համատարած հողաբուսական ծածկույթը բացակայում է, նախագծվող տեղամասում մակաբացման ապարների հզորությունը կազմում է 0.2մ–0.8մ միջին 0.5մ, որից հողաբուսական շերտինը 0.1մ է: Համաձայն ՇՄԱԳ-ի տեղեկատվության և ուսումնասիրության արդյունքների տարածքը տեղակայված չէ բնության հատուկ պահպանվող տարածքներում, անտառային հողերում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում:

ՀՀ Սյունիքի մարզի Շաքիի ավազների և գլաքարակոպճի հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ մինիստրների սովետին կից՝ Երկրաբանական

վարչության ՊՏՀ-ի կողմից 1976 թվականի դեկտեմբերի 28-ին, թիվ 229 արձանագրությամբ /01.07.1976 թվականի դրությամբ/: Հանքավայրում հաշվեկշռային պաշարները 2306.1հազ.մ$^3$ քանակով հաստատվել են՝ ըստ B կարգի - 3761.6հազ.մ$^3$, ըստ $C_1$ կարգի - 6067.7 հազ.մ$^3$, ըստ B+$C_1$ կարգերի /I-ին մարմնի համար/ B կարգ - 1702.0 հազ.մ$^3$, $C_1$ կարգ - 2888.6 հազ.մ$^3$, /II մարմնի համար/ B կարգ - 604.1 հազ.մ$^3$, $C_1$ կարգ - 873.0 հազ.մ$^3$: Համաձայն 8736-67 ГОСТ -ի ավազները կարելի է օգտագործել շինարարական աշխատանքներում՝ որպես ավազ և մանրախիճ:

«ԱՐԵՆԱ-3» ՍՊԸ-ի կողմից հայցվող 5.085հա տարածքում /1-ին հանքային մարմնի սահմաններում/ B կարգով պաշարների քանակը կազմում է 518400մ$^3$, իսկ ($C_1$) կարգով պաշարներինը՝ 346000մ$^3$: Մարվող պաշարների քանակը B+$C_1$ կարգով կազմում է 864400մ$^3$, իսկ կորզվող պաշարներինը՝ 834500մ$^3$:

Ընկերության կողմից նախագծված բացահանքը սահմանափակված է ARM WGS-84 համակարգի հետևյալ կոորդինատներով.

**S= 5.085հա**

| | | | |
|---|---|---|---|
| 1. Y = 8587400 | X = 4381542 | 7. Y = 8587660 | X = 4381717 |
| 2. Y = 8587416 | X = 4381576 | 8. Y = 8587700 | X = 4381582 |
| 3. Y = 8587441 | X = 4381596 | 9. Y = 8587710 | X = 4381475 |
| 4. Y = 8587444 | X = 4381608 | 10.Y = 8587628 | X = 4381449 |
| 5. Y = 8587439 | X = 4381626 | 11. Y = 8587524 | X = 4381533 |
| 6. Y = 8587471 | X = 4381693 | 12.Y = 8587480 | X = 4381560 |

Սույն նախագծով նախատեսվում է հանքավայրը շահագործել 20 տարի: Շահագործման 1-10 տարիներին մարվող պաշարների քանակը կկազմի 215450մ$^3$: Տարեկան մարվող պաշարների քանակը կկազմի 21545մ$^3$, իսկ կորզվող պաշարների քանակը կկազմի 208000մ$^3$, տարեկան 20800մ$^3$ արտադրողականությամբ:

Շահագործման 11-20 տարիներին մարվող պաշարների քանակը կկազմի 648950մ$^3$: Տարեկան մարվող պաշարների քանակը կկազմի են՝ 64895մ$^3$, իսկ կորզվող պաշարների քանակը կկազմի 626500մ$^3$, տարեկան 62650մ$^3$ արտադրողականությամբ:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով, առանց հորատապայթեցման աշխատանքների: Շահագործման 1-10 տարիներին տարեկան արտադրողականությունը կազմում է 20800մ$^3$, իսկ շահագործման 11-20 տարիներին՝ 62650մ$^3$:

Հանքավայրի մշակման համար ընտրվում է ընդլայնական, միակողանի մշակման համակարգ, մակաբացման ապարները դեպի հանքավայրի եզրագծի հարավ արևելյան մասը ներքին՝ ժամանակավոր լցակույտեր տեղափոխումով:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- Ամենամեծ երկարությունը – 310մ
- Ամենամեծ լայնությունը – 265մ
- Օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 45.0մ
- Մակաբացման ապարների միջին հզորությունը –0.65մ
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 864.4հազ.մ$^3$
- Արդյունահանվող պաշարների քանակը՝– 834.5հազ.մ$^3$
- Մակաբացման ապարների քանակը – 33.4հազ.մ$^3$, որից 4200մ$^3$-ը հողաբուսական շերտն է:

Հանքավայրի արդյունահանումը իրականացնելու համար անհրաժեշտ է բացահանքի վրայից հեռացնել 33400մ³ մակաբացման ապարներ, որոնք իրենցից ներկայացնում են բացահանքը տեղ-տեղ ծածկող հողաբուսական շերտ /4200մ³ ծավալով/ և էլյուվիալ-դելյուվիալ առաջացումներ /29200մ³ ծավալով/: Մակաբացման միջին գործակիցը տրամադրվող տարածքում 0. 04մ³/մ³ է:

Հանքավայրը բացելու համար բացահանքի հյուսիս արևելյան մասից մինչև 1800.0մ բարձրության հորիզոն նախատեսվում է կառուցել 344մ երկարությամբ 6մ լայնությամբ ճանապարհ, որի ամենամեծ թեքությունն է 87.21‰: Հաջորդ, 1795.0մ-ից մինչև 1775.0մ հորիզոնները ևս կմշակվեն նույն ավտոճանապարհից՝ աստիճանաբար կտրտվելով այն: 1770.0մ բարձրության հորզոնը կմշակվի նույն հյուսիս արևելյան ավտոճանապարհից՝ շրջանցելով արդյունաբերական հրապարակը արևելյան կողմից:

Բացահանքը մշակվում է ընդլայնական ընթացաշերտերով, միակող մշակման համակարգով, որի տարրերն են.

- աշխատանքային հանքաստիճանի բարձրությունը՝ 5.0մ,
- հանքաստիճանի թեքության անկյունը՝ 55⁰,
- հանքակողերի թեքության անկյունը՝ 45⁰,
- անվտանգության առափների լայնությունը՝ 2մ:
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 16.0մ:

Բացահանքում արդյունահանումը կատարվում է էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնային համալիրի միջոցով՝ առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման: Հանույթային և բարձման աշխատանքների իրականացման համար նախատեսված է 1.27մ³ շերեփի տարողությամբ Hyundai R-300LC-9S մակնիշի էքսկավատորը:

Բացահանքից ավազների և գլաքարակոպճի տեղափոխումը կատարվում է սպառողի ավտոինքնաթափով, իսկ մակաբացման ապարների տեղափոխումը մինչև 0.5կմ դեպի լցակույտեր, նախատեսվում է իրականացնել ավտոինքնաթափով:

Լցակույտեր տեղափոխվող օգտակար հաստաշերտը ծածկող մակաբացման ապարները ներկայացված են՝ հողաբուսակաքն շերտով, էլյուվիալ-դելյուվիալ նստվածքներով և օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ առաջացած ապարներով:

Շահագործման ընթացքում 4200մ³ ծավալով հողաբուսական շերտը կտեղափոխվի N1 լցակույտ /որը նախատեսված է բացահանքի հարավ արևելյան մասում/ և կպահեստավորվի լցակույտային ապարներից առանձին՝ հետագայում կենսաբանական վերականգնման աշխատանքների համար օգտագործելու նպատակով: N2 լցակույտ կտեղափոխվեն /որը նախատեսված է հողաբուսական շերտի հարևանությամբ/ 29200մ³ ծավալով էլյուվիալ առաջացումները, ինչպես նաև 5200մ³ ծավալով օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ առաջացած ապարները: Ընդհանուր N2 լցակույտ տեղափոխվող ապարների քանակը կկազմի՝ 34400մ³: Ժամանակավոր լցակույտերը նախատեսված են տրամադրվող տարածքի եզրագծի սահմաններում: Հնարավորություն ստեղծվելուց հետո, շահագործման 16-րդ տարուց սկսած մակաբացման ապարները աստիճանաբար կտեղափոխվեն բացահանքի բացված հանքաստիճանի վրա: Ներքին լցակույտի տեսքով՝ 0.8մ բարձրությամբ սկզբում կլցվեն N2 լցակույտի ապարները, ապա նրա վրա հողաբուսական շերտը և կհարթեցվի: Ժամանակավոր լցակույտը նախատեսված է բացահանքի հարավ արևելյան մասում: Այն երկայնուսով է՝ 9.7մ միջին բարձրությամբ, որի վերին մակերեսը կազմում է 1620մ², իսկ ստորին հիմքի մակերեսը՝ 5050մ²:

Բացահանքի բացված մակերեսն ամբողջությամբ կհարթեցվի շահագործման ավարտից հետո ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ:

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է բարձման աշխատանքների ժամանակ, փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով /չոր եղանակներին 7450մ$^2$ մակերեսով արտադրական տարածքը 2-3 անգամ ջրելու համար/ որի համար կպահանջվի 3725 լիտր ջուր: Տեխնիկական ջրամատակարարումը կիրականացվի ջրցան մեքենայի միջոցով՝ պայմանագրային հիմունքներով: Խմելու ջուրը /38.48մ$^3$/տարի, կամ 0.148մ$^3$ միջին օրեկան ծախսով/ նախատեսված է արտադրական հրապարակ բերել խմելու ջրի ցիստեռնով:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներով և արտահայտվում է փոշու և ծխագազերի առաջացմամբ: Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար իրականացվել է արտանետվող վնասակար նյութերի հաշվարկներ: Համաձայն հաշվարկների արդյունքների՝ աղտոտվածության առավելագույն մակարդակը զգալիորեն ցածր է եղել թույլատրելի նորմերից:

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից (Շաքի բնակավայրի հեռավորությունը աղմուկի աղբյուրից 1.2-1.5կմ) գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ ցածր:

Հանքավայրի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, լցակույտեր, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհ) պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում ձայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակադակի նվազեցման նպատակով,
- տեխնիկա-տրանսորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա զտիչների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում որպես մետաղական թափոն,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Բացահանքի լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնումներն իրականացվելու են բացահանքի շահագործման ավարտից հետո: Այդ նպատակի համար մակաբացման ապարները կտեղափոխվեն արդյունահանված հանքաստիճանների վրա, կլցվեն 0.8մ բարձրությամբ և կհարթեցվեն, որի վրա կփռվի հողաբուսական շերտը: Հարթեցումը կկատարվի բացահանքի հատակի ողջ

մակերևույթով՝ 41900մ² մակերեսով տարածքում: Կհարթեցվի նաև 300մ² արդյունաբերական հրապարակի, 1500մ² ավտոճանապարհների մակերեսները: Հարթեցման ընդհանուր մակերեսը կկազմի՝ 43700մ²: Հարթեցումը կկատարվի ДЗ-130 բուլդոզերի օգնությամբ: Մշակված տարածության լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնման ընդհանուր մակերեսը կկազմի 4.37հա: Լեռնային աշխատանքների հետևանքով խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը՝ գնահատվել է 561.6 հազ.դրամ: Տեխնիկական ռեկուլտիվացումից հետո կկատարվի կենսաբանական ռեկուլտիվացիա, որի իրականացման ծախսերը՝ 4.37հա մակերեսի համար հաշվարկվել է 874 000 ՀՀ դրամ: Կենսաբանական ռեկուլտիվացիայի նպատակով կօգտագործվեն տեղանքին բնորոշ բազմամյա խոտաբույսեր:Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 561.6+874,0=1435.6հազ. դրամ:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը և սոցիալական միջավայրը /աղմուկ, թրթռում/: Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան ծախսերը գնահատվել է 150.0 հազ ՀՀ դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

***Եզրափակիչ մաս***: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում Սյունիքի մարզի Սիսիան համայնքում և Շաքի բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման աշխատանքներում բնակավայրերից աշխատատեղերի ստեղծումը և Ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և արտակարգ իրավիճակների նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Սյունիքի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Վերլուծելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության և հանրային քննարկումների արդյունքները, պետք է փաստել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում

աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

## Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նորմերի, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև ապահովել Շաքի բնակավայրում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

2. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

3. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

4. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը /կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/ և դրանց իրականացման ժամանակացույցերը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԵՆԱ-3» ՍՊԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Շաքիի ավազների և գլաքարակոպճի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան